



FUNDAÇÃO CALOUSTE GULBENKIAN
 Հրատարակուած է
 Գալուստ Կիւլպենկեան հիմնարկութեան
 հովանաւորութեամբ

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

Թիի 1-12

ՅՈՒՆՈՒԱՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ

ձԻԵ. ՏԱՐԻ 2011

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՎԻԵՆՆԱ ՀԱՍՏԱՏՈՒԵԼՈՒ
 ԵՐԿՈՒՀԱՐԻՐԱՄԵԱԿԸ 1811-2011

Մխիթարեան Միաբանութիւնը համատարածութիւն վերջին երեք տարիներուն տեղի ունեցան Վիեննայի վանական համալիրի հիմնական վերանորոգումներ: Նորագուեցան շէնքի արտաքին եւ ներքին ճակատները, վանքի ճաշարահը, եկեղեցին, անձրեւէն վնասուած թանգարանի մեծ սրահը եւ մատենադարանը, ինչպէս նաեւ հին արքայարանը իր հանդիսարահով: Այդ բոլոր նորոգութիւնները կատարուեցան Յուշարձաններու Պետական Մարմնի տեւական հսկողութեան տակ եւ ըստ իրենց հարազատ նախնական տիպարին (original)՝ հիացում պատճառելով նոյնիսկ մասնագէտ ճարտարապետներուն:

Սոյն առիթով Վիեննայի փոստը տպեց յոբելինական դրոշմաթուղթ Մխիթարեան վանքի եւ մատենադարանի պատկերով, Հայաստանի Կենտրոնական Բանկը դրոշմեց յատուկ արծաթեայ յուշադրամ Մխիթար Աբբահօր եւ Վիեննայի մխիթարեան մատենադարանի պատկերով: Նոյն պատկերով Միաբանութիւնը արծաթեայ մետաղիոն դրոշմել տուաւ Վիեննայի մէջ: Բայց լաւագոյն յուշանուէրն էր վանքի

թիւ 543 ձեռագրի նմանատիպը (facsimile), որ Միաբանութիւնը լոյս ընծայեց 20 թուարկուած օրինակով:

Յոբելեանի բացումը եղաւ 12 Մայիսին յոբելինական դրոշմաթուղթի ներկայացումով վանքի ճաշարահին մէջ, ուր ցուցադրուեցան միաժամանակ յուշադրամներն ու ձեռագրի նմանատիպը:

Յոբելինական գլխաւոր հանդիսութիւնները՝ ակադեմիական հանդէսով ու Սուրբ պատարագով՝ տեղի ունեցան Սեպտեմբեր 10-11 վանքի եկեղեցոյ մէջ: Այս հանդէսներու նկարագրութիւնը կարելի է տեսնել յաջորդ էջերու մէջ:

Որպէս յոբելինական հանդիսութիւններու պսակում, Երեւանի մէջ, Հոկտեմբեր 10-11, Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի Նախարարութեան, ՀՀ. Գիտութիւնների Ազգայն Ակադեմիայի եւ Մխիթարեան Միաբանութեան կազմակերպութեամբ տեղի ունեցաւ մխիթարեան երկուհարիւրամեայ յոբելեանի նիւթով զիտածողով մը Ակադեմիայի Պատմութեան Ինստիտուտի սրահին մէջ: Զեկոյցներու մեծ մասը կը հրատարակենք յաջորդ էջերուն մէջ. մնացածները, որ դեռ մեզի չհասան, լոյս

կը տեսնեն Հանդէս Ամսօրեայի յաջորդ թուին մէջ:

ՄԻՒԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ 200-ԱՄԵԱՅ ՅՈՐԵԼԵԱՆԻ ԲԱՑՈՒՄ

Մխիթարեան Միաբանութեան Վիեննա Հաստատուելու 200-ամեայ (1811-2011) յորելեանի առիթով Աւստրիական փոստը յատուկ դրոշմաթուղթ հրատարակեց, որուն ներկայացումը տեղի ունեցաւ Մայիս 12-ին, Մխիթարեան վանքի վերանորոգուած ճաշարահին մէջ:

Այդ Հանդիսութեան, որ յորելեանական տօնակատարութեանց բացումը եղաւ, պատուոյ հիւրերն էին Աւստրիայի պապական նուիրակ՝ Փեթեր Արքեպիսկոպոս Յուրպրիկկըն, Կեղրոնական Եւրոպայի եւ Շուէտի Հայրապետական Պատուիրակ՝ Հայկազուն Մ. Վրդ. Նաճարեան, Վիեննայի մէջ Հայաստանի Հանրապետութեան լիազօր դեսպան՝ Աշոտ Յովակիմեան, Հայաստանի Համար Աւստրիական դեսպան՝ Միխայէլ Փոսթըլ, Վիեննական փոստի տնօրէն՝ Վոլֆկանկ Լեսիաք, Հայ առաքելական եւ կաթողիկէ Համայնքներու եւ միութիւններու ներկայացուցիչներ:

Հանդիսութեան բանախօսն էր Վիեննայի Մխիթարեան վանքի արքայապետ՝ Հ. Պօղոս Գոճանեան, որ Մխիթարեան Միաբանութեան եւ յատկապէս Վիեննայի վանքին պատմականը ըրաւ: Արքայապետը շեշտեց Հայ մշակոյթի եւ յատկապէս Հայագիտութեան համար Միաբանութեան կատարած բացառիկ դերը, որուն իբր խորհրդանիշ՝ դրոշմաթուղթի վրայ պատկերուած էր Վանքի գրադարանէն շքեղ պահարան մը:

Այնուհետեւ Վիեննական փոստի տնօրէն՝ Վոլֆկանկ Լեսիաք ներկայացուց գեղեցիկ դրոշմաթուղթը երկու միլիոն տպաքանակով, որոնք «պիտի ցրուին ամբողջ աշխարհ՝ իբրեւ Մխիթարեան Միաբանութեան եւ Հայ ազգի պատգամաւորները»:

Մէջընդմէջ ջուրկահարներ Անահիտ Մելիքեան եւ Լիլիթ Գրիգորեան նուագեցին Հայ ժողովրդական երգեր:

Դրոշմաթուղթէն զատ ցուցադրուած էին նաեւ Հայաստանի կենտրոնական պանքի եւ Աւստրիական դրամատան կողմէ, նոյն յորելեանական առիթով, լոյս ընծայուած արծաթեայ յուշադրամներ, ինչպէս նաեւ սքանչելի նմանատիպ մը (Ֆաքսիմիլ) Մխիթարեան վանքի շատ նուրբ մանրանկարներով մէկ ձեռագրէն (Ձեռ. 543, Ներսէս Շնորհալիի գրութիւնները):

Հանդիսութեան աւարտին կատարուեցաւ ընդունելութիւն հացիկներով:

ՄԻՒԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ 200-ԱՄԵԱՅ ՅՈՐԵԼԵԱՆԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ՎԻԵՆԱՅԻ ՄԵՉ

Ակադեմական հանդէս եւ Ս. Պատարագ

Մխիթարեան Միաբանութեան Վիեննա Հաստատուելու 200-ամեայ յորելեանի գլխաւոր տօնակատարութիւնները տեղի ունեցան Սեպտեմբեր 10-ին, շաբաթ՝ ակադեմական Հանդէսով եւ 11-ին, կիրակի՝ Հանդիսական սուրբ պատարագով, վանքի վերանորոգուած եկեղեցւոյ մէջ, Հովանաւորութեամբ Վիեննայի արքեպիսկոպոս կարդինալ Քրիստոֆ Շէօնպոռնի:

Ակադեմական Հանդէսը, որ նոյնպէս եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ, ունէր խիտ բովանդակութիւն՝ վեց բանախօսութիւններով եւ մէջընդմէջ երգերով: Մուտքը հրաւիրատուներով էր՝ բոլորին նստելու տեղ ապահովելու համար: Եկեղեցին ծայրէ ծայր լեցուած էր: Ներկայ էին Աւստրիայի պապական նուիրակ՝ Փեթեր Արքեպիսկոպոս Յուրպրիկկըն, տեղական բարձրաստիճան եկեղեցականներ՝ եպիսկոպոսներ եւ արքայապետներ, Հայ առաքելական եկեղեցւոյ նախկին Հայրապետական Պատուիրակ՝ Մեսրոպ արք. Գրիգորեան եւ անոր նո-

րընտիր յաջորդը՝ Հայկազուն Մ. Վրդ. Նաճարեան, Վիեննայի մէջ Հայաստանի Հանրապետութեան լիազօր դեսպան՝ Աշոտ Յովակիմեան, Հայաստանի համար Աւստրիական դեսպան՝ Միխայէլ Փոսթըլ, Աւստրիայի մշակոյթի նախարարութեան եւ Վիեննայի մշակութային պետական բաժանմունքի ներկայացուցիչներ, Հայ եւ աւստրիացի բարեկամներ: Վենետիկէն եկած էր Միաբանութեան ընդհանուր արքայապետը՝ Հ. Եղիա Քիլազպեան վարդապետներով ու ժառանգաւորներով:

Հանդէսը սկսաւ կէսօրէ վերջ ժամը 4-ին: Հանդիսավարը՝ Հարպտ Շիրիքճեան հիւրերը ողջունելէն յետոյ, կարգաց օրհնութեան գիրերը՝ Վատիկանէն, Արեւելեան Եկեղեցիներու Միաբանութեան Կարդինալ Լէոնարտո Սանտրիի, Անթիլիասէն, Մեծի տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա.ի եւ Պէյրութէն, Հայ կաթողիկէ Կաթողիկոս-Պատրիարք Ներսէս Պետրոս ԺԹ. Ի կողմէ:

Այնուհետեւ բեմ հրաւիրուեցաւ առաջին բանախօսը՝ Վիեննայի արքայապետը՝ Հ. Պօղոս Գոճանեան, որ ամփոփ ներկայացուց Մխիթարեան Միաբանութեան եւ յատկապէս Վիեննայի մասնաճիւղին 200-ամեայ մշակութային գործունէութիւնը՝ կրթական, գրական, Հայագիտական մարզերէ ներս:

Բանախօսութենէն վերջ Տիկին Նինա Սարգսեան իր նուրբ եւ անոյշ ձայնով երգեց Եկմալեան պատարագի «Սուրբ սուրբ»ը: Այս եւ բոլոր յաջորդող երգերուն կընկերանար երգչոնով տիկին Իլոնա Փեթէօչ:

Երկրորդ բանախօսը՝ Պելճիքայէն, Բենեդիկտեան վանքի մը նախկին արքայապետ Հ. Միշել վան Փարիս, խօսելով մխիթարեան գաղափարականի մասին՝ շեշտեց անոր մէջ կրօնի եւ մշակոյթի անբաժան կապն ու միասնութիւնը:

Տիկին Այդա Բաղրամեան իր լեցուն եւ ուժեղ ձայնով երգեց „Stabat Mater“:

Երրորդ բանախօսը՝ Հ. Մեսրոպ Թոփալեան նիւթ առնելով Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան միայն Հայագիտական վաստակը, հիացումով յայտնեց իր բարձր գնահատանքը այդ վաստակին:

Տիկին Նինա Սարգսեան երգեց «Տէր, կեցո՛ւ Դու զՀայս»:

Չորրորդ բանախօսը՝ Դոկտ. Հելմութ Պուշտալըն պիտի խօսէր Մխիթարեան վանքի ձեռագիրներու մասին, բայց այդ օր հիւանդանոց պառկած ըլլալով՝ Հանդիսավարը կարգաց անոր գրութեան ամփոփումը:

Տիկին Այդա Բաղրամեան երգեց «Ափսոսանք»ը:

Հինգերորդ բանախօսը՝ Դոկտ. Տիկին Պարպարա Տենչեր տուաւ Մխիթարեան տպարանի պատմականը՝ շատ հետաքրքիր, նոյնիսկ Մխիթարեան Հայրերուն անծանօթ մանրամասնութիւններով:

Տիկին Նինա Սարգսեան երգեց «Կիլիկիա»ն:

Վեցերորդ բանախօսը՝ Հ. Նարեկ Տատուրեան պատմեց այս առիթով կատարուած վանքի եւ եկեղեցւոյ նորոգութիւններու մասին՝ նկարներու ցուացումով: Վերջին երեք տարիներուն վանքի Համալիրը ոչ միայն հիմնովին նորոգուեցաւ, այլ մանաւանդ Յուշարձաններու պահպանութեան պետական մարմնի հսկողութեան տակ՝ բոլորովին վերադարձաւ իր սկզբնական կառոյցին: Մանաւանդ եկեղեցին ստացաւ բացառիկ գեղեցկութիւն՝ անճանաչելի դառնալով:

Վերջին բանախօսութենէն վերջ՝ պատուելու համար վանքին մասնաւոր կերպով նուիրուած երեք անձեր՝ Դոկտ. Երուանդ Զարմանեան, Դոկտ. Ժան Ժաք Շիրիքճեան եւ տիկին Անթուանէթ Ունանեան, արքայապետը փոքր արարողութեամբ անոնց տուաւ Մխիթարեան երրորդ կարգի անդամակցութիւն:

Տրկին Այդա Բաղրամեան երգեց «Կարօտ»ը կամ «մարտիկի երգ»ը:

Ապա արբաճայր Հ. Պօղոս Գոճանեան ըսաւ իր փակման խօսքը՝ շնորհակալութիւն յայտնելով բոլոր անոնց, որ իրնց ներկայութեամբ եւ մանաւանդ գործօն մասնակցութեամբ՝ հանդէսի յաջողութեան նպաստեցին:

Այնուհետեւ ներկաները հաւաքուեցան վանքի բակը, ուր ճոխ հիւրասիրութեամբ եւ բարձր տրամադրութեամբ սօնական մթնոլորտը վայելեցին մինչեւ ուշ երեկոյ:

Սեպտեմբեր 11-ին, կիրակի ժամը ճիշտ 11-ին սկսաւ հանդիսական սուրբ պատարագը վանքի եկեղեցւոյ մէջ: Ներկաները գրեթէ նախորդ օրուան հիւրերն էին: Պատարագեց Վիեննայի վանքին արբաճայրը Հ. Պօղոս Գոճանեան: Երգչախումբը մեծ

յաջողութեամբ երգեց Եկմալեանի արական ձայնի համար պատրաստած եռաձայն պատարագը՝ ղեկավարութեամբ Տրկին Կարինէ Ժամկոչեան-Սիմոնեանի եւ Երգչոնի ընկերակցութեամբ Տրկին Իլոնա Փեթէօջի: Օրուան պատշաճ տպաւորիչ քարոզը խօսեցաւ Վիեննայի թեմին ձեռնադրիչ եպիսկոպոս Հելմութ Քրեցըլ, որ ծնած ըլլալով Մխիթարեան վանքի մօտ եւ դրոշմուած՝ Հապոզեան արբաճօրմէ, մանկութեան տարիներէն միշտ կապը պահած է վանքին հետ: Օտար հաւատացեալներէն շատեր, որ առաջին անգամ ըլլալով ներկայ եղած էին հայ պատարագի, խորապէս տպաւորուած էին հայ ծէսի գեղեցկութեամբ: Պատարագէն վերջ ժողովուրդը նորէն հիւրասիրուեցաւ վանքի բակը, ուր երկար մնացին վայելելով նաեւ Սեպտեմբերի համար անսովոր գեղեցիկ օդը:

ԲԱՑՄԱՆ ԽՕՍԳ

Հրանոյշ Յակոբեան

Հոգեւոր հայրեր, գիտաժողովի յարգարժան մասնակիցներ, հիւրեր,

Ողջունում եմ Վիեննայի Մխիթարեան միաբանութեան 200-ամեակին նուիրուած գիտաժողովի մասնակիցներին, սիրով եւ հպարտութեամբ շնորհաւորում եմ բոլորիս այս հրաշալի յոբելեանի առթիւ, մաղթում լուսանորոգ ու բեղմնաւոր գիտական, ստեղծագործական ճանապարհներ մխիթարեան հայրերին, որպէսզի շարունակեն ոգով ու ջանադրութեամբ հայ մշակոյթը, զարգացնելու եւ աշխարհին ճանաչելի դարձնելու իրենց պատրաստակամութիւնը:

Ուզում եմ խոնարհուել բոլոր այն հոգեւոր հայրերի յիշատակի առջեւ, ովքեր նուիրումի, մեծ տքնանքի ու մաքառումի գնով կերտեցին այն բարձր մշակոյթի աշխարհը, որ կոչւում է Մխիթարեան միաբանութիւն:

Հպարտութեամբ պիտի արձանագրենք, որ Մխիթարեան միաբանութիւնը մի զարմանալի, բացառիկ երեւոյթ է ոչ միայն հայ, այլեւ համաշխարհային մշակոյթի պատմութեան մէջ: Ո՞րն է գաղտնիքը, որ մի խումբ տարագիր հոգեւորականներ դարեր շարունակ շահում են Հռոմի պապերի, Եւրոպայի ամենագօրաւոր միապետների ու իշխանաւորների համակրանքն ու բարեհաճութիւնը եւ եւրոպական արժէքների տիրոյթում հաստատում են հայկական մշակոյթը, որն իր ուրոյն տեղն ու դերն է գրաւում՝ դառնալով այն կենսաբեր զարկերակներից մէկը, որով Հայաստան աշխարհը միանում է համաշխարհային մշակոյթին:

Այդ հարցին դիպուկ պատասխանում է մեծ բանաստեղծ Ջորջ Բայրոնը. «Այս մարդիկ (Մխիթարեանները) հարստահա-

րուած եւ բարձրատոհմ մի ազգի կրօնաւորներն են, ազգ, որ հրեաների եւ յոյների պէս տարագիր է եղել՝ առանց առաջինների ինքնամեկուսացման եւ վերջինների ստրկամտութեան: Այս ժողովուրդը հարստացել է առանց բանսարկութեան»:

Յարգելի ներկաներ,

Որո՞նք են այն մեծագոյն ներդրումները, որ իրենց հոգեւոր-մշակութային օջախը 200 տարի առաջ կառուցելով Եւրոպայի սրտում՝ Վիեննայի Մխիթարեան միաբանութեան տաղանդաշատ ու ազգանուէր հոգեւորականները կատարեցին: Նախ՝ նրանք իրենց արգասաւոր գործունէութեամբ հայ ժողովրդին հաղորդակից դարձրին եւրոպական արուեստին ու գրականութեանը, կառուցեցին նորանոր հոգեւոր կամուրջներ՝ ուղղորդելով հայկական մշակոյթը դէպի արեւմտեան արժեհամակարգ:

Դարեր շարունակ հայ հոգեւորականները ստեղծել են ամայի աւերակները, անապատները ծաղկուն կրթամշակութային օջախների, վանական համալիրների վերածելու բացառիկ պատմութիւն: Այդպէս էլ երեք դար առաջ ներսէս Շնորհալու արժանի ժառանգորդը՝ Մխիթար Սեբաստացին, իր մի խումբ միաբաններով, Վենետիկի փոքրիկ կղզին՝ Սուրբ Ղազարը, որն ընդամէնը բորոտների մեկուսարան ու դարմանատեղ էր, մաքրագործեց աստուածային լոյսով եւ վերածեց մի իւրայատուկ ոգեղէն Հայաստանի՝ կեանքի կոչելով Մխիթարեան միաբանութեան կարգախօսը՝ «Ի փառս Աստուծոյ եւ յանուն լուսաւորութեանն ազգի մերոյ»: